

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊՀ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ
ԲԱՆԿ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԸ
ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆԸ
*Վիճակագրական - վերլուծական զեկույց***


Ըստ 2011թ.-ի տնային տնտեսությունների կենսամակարդակի
ամբողջացված հետազոտության արդյունքների

Տեղեկատվության բազմազանմամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ) շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում նրանց ու հարկատուներին, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և մարկետինգի բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական շենք, 3

 *(+374 10) 52-33-56*

Ցմբու (+374 10) 52-19-21

Էլեկտրոնային փոստ info@armstat.am

ՀՀ ԱՎԾ կայքէջ <http://www.armstat.am> (հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>)

© ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ, 2012թ.

ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը (ՀՀ ԱՎԾ), երկրում աղքատության մակարդակի և սոցիալական իրավիճակի վերաբերյալ հանրությանը տեղեկացնելու նպատակով, ամենամյա պարբերականությամբ հրապարակում է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» վիճակագրական-վերլուծական զեկույցը: Ձեկույցը պատրաստվել է «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի տեխնիկական օժանդակությամբ և ԱՄՆ Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի տրամադրած ֆինանսական միջոցներով, իսկ բովանդակությունը շարադրվել է Համաշխարհային բանկի վերլուծական և տեխնիկական աջակցությամբ: Ներկայացվող վերլուծականը կոչված է հանրությանը տրամադրելու 2011թ.-ի կենսամակարդակի և երկրի սոցիալական իրավիճակի մասին տեղեկատվություն: Այն մանրամասն վիճակագրական տեղեկատվություն է տրամադրում ընթացիկ սոցիալական և տնտեսական զարգացումների մասին: Ձեկույցը նկարագրում է աղքատության դինամիկան երկրի և տարբեր սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական և աշխարհագրական մակարդակներով: Նշյալ զեկույցի հիմքը ՀՀ ԱՎԾ կողմից յուրաքանչյուր տարի իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) արդյունքներն են: Այդպիսի վիճակագրական ուսումնասիրությունները միջազգայնորեն համարվում են բնակչության կենսամակարդակը բնութագրող տվյալների հավաքագրման առավել կարևոր գործիք: Հետազոտությունների միջոցով տնային տնտեսությունների և առանձին անհատների բարեկեցության վերաբերյալ հավաքագրվում է բավական հարուստ և արժեքավոր տեղեկատվություն, ինչը հնարավորություն է ընձեռում ՀՀ ԱՎԾ-ին տարեկան կտրվածքով հանրությանը տրամադրել արդիական տեղեկատվություն՝ բնակչության եկամուտների, ծախսերի, աղքատության մակարդակի և այլ ցուցանիշների փոփոխությունների վերաբերյալ: ՀՀ ԱՎԾ-ն շարունակաբար ջանքեր է գործադրում կատարելագործելու այդ հետազոտությունները (SSԿԱՀ)՝ զարգացած երկրներում նմանատիպ հետազոտությունների արդյունքների հետ ամբողջովին համադրելի դարձնելու ակնկալիքով: ՀՀ ԱՎԾ-ն հետամուտ է լինում աղքատության մակարդակի գնահատման ժամանակակից մեթոդաբանությանն ու մոտեցումներին:

2007թ-ի հունվարի 1-ից մինչև 2012թ-ի հունվարի 20-ը իրականացվող տնային տնտեսությունների կենսամակարդակի (կենսապայմանների) ամբողջացված հետազոտությունները (SSԿԱՀ) ֆինանսավորվում էին ՀՀ պետական բյուջեի և «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամ-Հայաստան» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՀՄՀ-Հայաստան) կողմից:

Ի թիվս այլ գործառնությունների՝ SSԿԱ հետազոտությունն օգտագործվել է նաև ՀՄՀ-Հայաստան ծրագրի նպատակային մակարդակի ցուցանիշների մոնիթորինգի համար: Բացի այդ, վերանայվել է SSԿԱ հետազոտության ընտրանքը, ինչպես նաև ընդլայնվել է գյուղական ընտրանքը՝ ԱՄՆ կառավարության Հազարամյակի մարտահրավեր կորպորացիայի (ՀՄԿ) կողմից Հայաստանի գյուղատնտեսության և ոռոգման ոլորտներում կատարված 177 մլն. ԱՄՆ դոլարի ներդրման ազդեցությունը վերլուծելու նպատակով: ՀՄՀ-Հայաստան ծրագրի նպատակն է կրճատել գյուղական աղքատությունը՝ կենսական մեծ նշանակություն ունեցող ոռոգման ենթակառուցվածքների վերականգնման, ինչպես նաև ֆերմերներին ու վերջիններս ջուր մատակարարող կառույցներին ֆինանսական ու տեխնիկական աջակցություն ցուցաբերելու միջոցով:

ՀՄՀ-Հայաստան ծրագրի շրջանակներում շուրջ հինգ տարի համաֆինանսավորվող SSԿԱ հետազոտության 2011 թ-ի արդյունքները ներկայացնող այս զեկույցը թվով վերջինն է. 2011 թ.-ի սեպտեմբերի 29-ին ազդարարվեց հնգամյա այս ծրագրի ավարտը:

«Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» պարբերականի սույն համարի հիմքում ընկած են 2011թ. իրականացված 7872 տնային տնտեսությունների հետազոտությունից հավաքագրված տվյալները:

Հետազոտության ընտրանքի ձևավորման համար օգտագործվել է 2001թ.-ի մարդահամարի տվյալների բազան: Ձևավորված ընտրանքի չափը հնարավորություն է ընձեռել ապահովելու տվյալների նվազագույն ներկայացուցչականություն մարզային կտրվածքով¹:

Հետազոտությունն իրականացվել է 2011թ. հունվարի 1-ից դեկտեմբերի 31-ը: Հետազոտության իրականացման համար վերանայվել է ՏՏԿԱՀ հարցաշարը:

Սույն զեկույցում ներկայացված արդյունքները հիմնված են 2009թ. աղքատության մակարդակի գնահատման ճշգրտված մեթոդաբանության վրա, որը մշակվել է Համաշխարհային բանկի փորձագետների աջակցությամբ: Ի տարբերություն ՀՀ ԱՎԾ-ի կողմից 2004-2008թթ. կիրառվող մեթոդաբանության՝ ճշգրտված մեթոդաբանությունն ունի հետևյալ առանձնահատկությունը. ձևավորվել է նոր նվազագույն պարենային զամբյուղը, որն արտացոլում է 2004-2008թթ.-ից ի վեր սպառման կառուցվածքի մեջ տեղի ունեցած փոփոխությունները, ինչպես նաև պարենային և ոչ պարենային ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռները: Նոր նվազագույն պարենային սպառման մոդելը կառուցելիս կիրառվել են 2009թ.-ի ՏՏԿԱՀ արդյունքները: Նոր զամբյուղը կիրառվել է ծայրահեղ և ընդհանուր (ստորին և վերին) աղքատության գծերը հաշվարկելու համար: Նոր զամբյուղը կկիրառվի որպես համեմատության հիմք աղքատության մակարդակի գնահատման համար և կճշգրտվի՝ հաշվի առնելով հանրապետական միջին տարեկան գնաճի մակարդակը: Մեթոդաբանության մանրամասները զետեղված են <<Մեթոդաբանական պարզաբանումներ>> բաժնում:

Այսպիսով, նպատակ ունենալով փաստագրել Հայաստանում սոցիալ-տնտեսական իրավիճակն ու աղքատության մակարդակը, սույն զեկույցը ներկայացնում է 2008-2011թթ.-ի ընթացքում Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների և աղքատության մակարդակի փոփոխությունների համապարփակ վերլուծությունը:

Զեկույցում օգտագործվել է նաև ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության, կրթության և գիտության նախարարությունների կողմից տրամադրված տեղեկատվությունը:

Հուսով ենք, որ սույն զեկույցը տեղեկատվության կարևոր աղբյուր կլինի Հայաստանում սոցիալ-տնտեսական զարգացումների և աղքատության մակարդակի վերաբերյալ տեղեկացված լինելու ցանկություն ունեցող բոլոր սպառողների համար:

Ստեփան Մնացականյան

ՀՀ ազգային
վիճակագրական
ծառայության նախագահ

Էդգար Ավետյան

ՀՀ ֆինանսների
նախարարության
«Արտասահմանյան
ֆինանսական ծրագրերի
կառավարման կենտրոն» ՊՀ-ի
Գործադիր տնօրեն

1. Միայն 2004-2011թթ.-ի հետազոտություններն են ապահովել տվյալների մարզային կտրվածքով նվազագույն ներկայացուցչականությունը.